ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2023թ. թիվ 559-Ա

ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին գումար հատկացնելու մասին» N 1765-Ն որոշման 3-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ և 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթներով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ծառայությունների ձեռքբերումն իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնման ձևով: Գնման ընթացակարգի հրավերը տրամադրել միայն գնման հայտում նշված անձանց (հնարավոր մասնակիցներին):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

18/10/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր